Նախագիծ
Երկրորդ ընթերցում

Պ-001-20.05.2017,15.11.2017-ՊԱ-011/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳԻ ԽԱԽՏՄԱՄԲ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՉԱՆՑԱԾ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Սահմանված կարգի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների մասին» Հայաստանի Հանրապետության 2003 թվականի դեկտեմբերի 17-ի ՀՕ-8-Ն օրենքի (այսուհետ Օրենք) 1-ին հոդվածի 1-ին մասում՝

1) «2015 թվականի մայիսի 1-ն» բառերը փոխարինել «2017 թվականի դեկտեմբերի 1-ն» բառերով.

2) «Հայաստանի Հանրապետության քաղաքացիների (անձանց) վրա» բառերը փոխարինել «այն քաղաքացիների վրա, որոնց նկատմամբ պարտադիր զինվորական ծառայությունից խուսափելու հիմքով օրենքով սահմանված կարգով հարուցված է քրեական հետապնդում:» բառերով:

Հոդված 2. Օրենքի 2-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝

«Հոդված 2. Պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացու նկատմամբ հաշվարկվող գումարը

Պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացին իր նկատմամբ հարուցված քրեական հետապնդումը դադարեցնելու և օրենքով սահմանված կարգով պահեստազորում հաշվառվելու նպատակով կարող է օրենքի խախտմամբ չզորակոչված յուրաքանչյուր զորակոչի դիմաց վճարել նվազագույն ամսական աշխատավարձի 200-ապատիկի չափով գումար (այսուհետ՝ օրենքով սահմանված վճար):»:

Հոդված 3. Օրենքի 3-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը լրացնել նոր նախադասությամբ. «Դիմում կարող է ներկայացնել նաև պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացու կողմից լիազորված անձը:».

2) 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«2. Պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացու կամ նրա կողմից լիազորված անձի դիմումը պետք է լինի ստորագրված, նշվի ներկայացնելու ամիսը, ամսաթիվը, տարեթիվը, քաղաքացու ազգանունը, անունը և հայրանունը, Հայաստանի Հանրապետությունում կամ օտարերկրյա պետությունում բնակության (հաշվառման) վայրը, պարտադիր զինվորական ծառայությունից խուսափելու ժամանակահատվածը և պատճառները: Դիմումին կից ներկայացվում են՝ քաղաքացու ծննդյան վկայականի և անձնագրի պատճենները, բնակության (հաշվառման) վայրի մասին տեղեկանք, քաղաքացու կողմից պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու կամ պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում ստանալու հիմք ունենալու դեպքում՝ նաև հիմքը հաստատող փաստաթղթերը, իսկ դիմումը լիազորված անձի կողմից ներկայացվելու դեպքում՝ նաև լիազորված անձի անձնագրի պատճենը: Պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու կամ պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում ստանալու հիմքը հաստատող փաստաթղթերը ներկայացվում են բնօրինակով և դրանց պատճեններով: Եթե պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու կամ պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում ստանալու հիմքը հաստատող փաստաթղթերը հանդիսանում են օտարերկրյա պետությունում տրված փաստաթղթեր, ապա դրանք պետք է վավերացված լինեն ապոստիլով և նոտարական կարգով հաստատված հայերեն թարգմանությամբ: Տարածքային զինվորական կոմիսարիատում պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու կամ պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում ստանալու հիմքը հաստատող բնօրինակ փաստաթղթերը համեմատվում են դրանց պատճենների հետ, որից հետո բնօրինակ փաստաթղթերը վերադարձվում են դիմումատուին:»:

Հոդված 4. *Օրենքը լրացնել նոր 8-րդ հոդվածով՝*

«**Հոդված 8. Եզրափակիչ դրույթ**

Սույն օրենքը գործում է մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը»:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳԻ ԽԱԽՏՄԱՄԲ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՉԱՆՑԱԾ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ¦ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ **(Պ-001-20.05.2017,15.11.2017-ՊԱ-011/1)** ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԳՐԱՎՈՐ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

ԱՌԱՋԱՐԿԻ ՀԵՂԻՆԱԿԸ	ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾԸ ԿԱՄ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԸ	ԱՌԱՋԱՐԿԸ	ԱՌԱՋԱՐԿԸ (ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ, ԼՐԱՑՈՒՄԸ) ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԻՄՆԱԿԱՆ ԶԵԿՈՒՑՈՂԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒԸ	ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ
ԵԼՔ խմբակցություն	Նախագծի 2-րդ հոդված	հանել ամբողջությամբ:	Ընդունելի չէ	Չի ընդունվել
ԵԼՔ խմբակցություն	Օրենքի 2-րդ հոդված 1-ին մաս	1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ պարտադիր զինվորական ծառայություն չանցած 27-ից 35 տարեկան զինապարտ քաղաքացիները՝ նվազագույն աշխատավարձի 100-ապատիկի չափով:	Ընդունելի չէ	Չի ընդունվել
ԵԼՔ խմբակցություն	Օրենքի 2-րդ հոդված	1-ին մասի 2-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ		Չի ընդունվել

		կետերի ինչպես նաև 2-րդ և 3-րդ մասերի չափանիշները համապատասխանեցնել «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների չափանիշներին:	Ընդունելի չէ	
ԵԼՔ խմբակցություն	Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մաս	ավելացնել 8-րդ կետ հետևյալ բովանդակությամբ՝ պարտադիր զինվորական ծառայություն չանցած 35-ից 55 տարեկան զինապարտ քաղաքացիները, պարտադիր զինվորական ծառայության զորակոչին օրենքի խախտմամբ չներկայանալու պահից սկսած՝ յուրաքանչյուր չզորակոչված (խուսափած) զորակոչի դիմաց վճարում են գումար՝ նվազագույն աշխատավարձի 200-ապատիկի չափով:	Ընդունելի չէ	Չի ընդունվել
ԵԼՔ խմբակցություն	Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մաս	ավելացնել 9-րդ կետ հետևյալ բովանդակությամբ՝ զինվորական ծառայությունից ազատվելու կամ տարկետման հիմքեր ձեռք բերած զինապարտ 35-ից 55 տարեկան քաղաքացիների համար վճարը հաշվարկվում է սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, կետերով սահմանված դրույքաչափերի կրկնապատիկի չափով:	Ընդունելի չէ	Չի ընդունվել

ԵԼՔ խմբակցություն	Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մաս	ավելացնել 10-րդ կետ հետևյալ բովանդակությամբ՝ 55 տարին լրացած քաղաքացիները վճարում են 0-ապատիկի չափով:	Ընդունելի չէ	Չի ընդունվել
ԵԼՔ խմբակցություն	2-րդ հոդվածի 1-ին մաս	ավելացնել 11-րդ կետ հետևյալ բովանդակությամբ՝ պարտադիր զինվորական ծառայություն չանցած՝ զինվորական ծառայության համար պիտանի այն քաղաքացիները, ովքեր սահմանված կարգով՝ իրենց դիմումի համաձայան կզորակոչվեն պարտադիր զինվորական ծառայության, վճարում են 0-ապատիկի չափով:	Ընդունելի չէ	Չի ընդունվել
ԵԼՔ խմբակցություն	Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մաս	«Դիմում կարող է ներկայացնել նաեւ պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացու կողմից» բառերից հետո լրացենել «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով կամ «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով» բառերը:	Ընդունելի չէ	Չի ընդունվել
ԵԼՔ խմբակցություն	Նախագծի 4-րդ հոդված	հանել ամբողջությամբ:	Ընդունելի չէ	Չի ընդունվել